

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆԻՑ

\*\*

Ա.

ՔԱՂԱՔԱՅԻ Ե ԿԱԽՈՎԱԿԱՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրինութիւնը.

Կոնդակ յանուն փոխ թեմակալին Հայոց Երեանայ՝  
առնել ընտրութիւն նորոյ փոխանորդի վիճակին Ալէք-  
սանդրապոլայ: Թ. 124.

— Յանուն Տ. Միքայէլ վարդապետի Անուսյ, որով  
կարգի վանահայր վանօրէիցն Անուսյ: Թ. 128.

— Յանուն Ղեօնդ եպիսկոպոսի ի ձեռնադրել զնա-  
հապետ Սարգսեան ի քահանայ Ն. Խաթունարխ գեղջ.  
Թ. 171.

— Յանուն առաջնորդացն Տփխեաց, Շամախւոյ, Բե-  
սարաբիոյ, Ղարաբաղի, Երեանայ և Կոնսիստորիային  
Աստրախանայ ի տալ զտեղեկութիւն զժուսյ ծխական  
ուսումնարանաց, հոգաբարձուաց, ուսուցչաց և վարժու-  
հեաց: Թ. 184.

— Յանուն հոգ. կառ. Ալէքսանդրապոլայ ի տալ  
զարդիւնս մոմավաճառութեան շրջանին Մեծ Ղարաբիլի-  
սայ գեղջ դպրոցի տեղւոյն: Թ. 212.

— Շրջաբերական առաջնորդացն Խուսահայոց և Կոն-  
սիստորիային Աստրախանի, ընդ որում յդեցան ժամա-  
նակաւոր կանոնը եկեղեց. ծխակ. դպրոցաց: Թ. թ. 230,  
231, 232, 233, 234, 235.

— Յանուն Ամենապատիւ պատրիարքացն Երուսա-  
լիմայ և Կ. Պոլսոյ յառաքել զընծայացուս ի ձեռնադրու-  
թիւն յեպիսկոպոսութիւն: Թ. 246.

— Երջարերական յանուն առաջնորդացն Առւաշայոց և Կոնսիստ. Աստրախանի ընդ որում յղեցան օրինակը Հայաստանեայց առաքելական և եկեղեցւոյ ծխական կանոնագրութեան ի կիրառութիւն։ Թ. թ. 247, 248, 249, 250, 251, 252.

— Յանուն առաջնորդին Վրաստանի ի խնդրել զՏ. Փոխարքայն տալ փութացուցանել դառաքումն կանոնաց դպրոցաց թեմիցն Բեռարարիոյ և Աստրախանի և գրաւեալ դրամոց վահորէիցն։ Թ. 268.

— Յանուն հօդ. կառավարութեան Տաթեու, որով արձակեալ համարի աւագ ուսուցիչն Գորիս գեղջ։ Թ. 269.

— Յանուն Սինոգին, որով պատուիրեցաւ փոխագրել զհոգեոր կառավարութիւնն ի Տաթեէ ի Գորիս թ. 289.

## Բ.

Հայրապետական գոհունակութիւնը եւ օրհնութիւնը.

Կոնդակ յանուն երեցփոխին ո. Նշան եկեղեցւոյ կարուց Մկրտչի կոստանեան վասն անձնուէր ծառայութեան։ Թ. 95.

— Յանուն Յակոբայ Աստուբեան ի Գահիրէ վասն 10 եգիպտական ոսկւոյ ի նպաստ արկածելոց։ Թ. 96.

— Յանուն Հոգաբարձուաց ազգային հիւանդանոցին կ. Պոլսոյ վասն յղեալ օրացուցաց։ Թ. 104.

— Մագիստրադինեայ Աթարեանց վասն 130 հազար լուբ. նուիրաբերութեան յայլ և այլ բարեգործական նպատակու թ. 157.

## Գ.

Հայրապետական պարզեւք.

Կոնդակ Յանուն Տ. Միքայէլ վարդապետի Անուոյ, որով շնորհի նմա լանջախաչ։ Թ. 126.

— Յանուն վանահօրն Հառիճոյ Տ. Արիստակէս վարդապետի ի նոյն միտու թ. 159.


— Յանուն Տ. Յակովը քահանայի Գեօրիս գեղջ, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, թ. 280.

— Յանուն Տ. Յարութիւն քահանայի Յակոբեան ի նոյն միտու թ. 283.

— Յանուն Տ. Աւետիս քահանայի Շողոյեան, որով շնորհի պատիւ աւագ քահանայութեան, թ. 290.

### Մակագրութիւն

Ի գրութեան Կոնսիստորիային Տփխեաց—«Պատուիշեմք Տ. Եղիշէ վարդապետի Մուրագեանց դարձուցանել անդրէն զ100 ըուբլիու թ. 155.



ՔԱՂԱՔԱՆԱՐԱՐ ԱԽՆՈՒԹԻՒՆ ՕՐԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Յունուարի 19-ին Սինոդը հրամայեց Մ. Աթոռի ձեւմարանի վարչութեան և բոլոր դպրանոցների հոգաբարձութեան տալ տեղեկութիւն անցեալ 1906 տարուայ համար:

Նոյն ժուին Սինոդը հրամայեց կազմել մատեան մէն մի վանքապատկան գիւղերի, արձանագրելու կալուածները մանրամասնորէն:

Յուն. 22-ին Սինոդը հրամայեց ուղարկել ժապաւինեալ մատեաններ Կոնսիստորիաները օտարաց և վիճակային դրամները արձանագրելու.

Յուն. 24-ին Սինոդը հրամայեց ուղարկել պատճէնը Քիշինևի նահանգական դատախազին, Կարապետ Օհանջանեանին՝ Բես. Կոնսիստորիայի ատենագրին՝ քրէական պատասխանատուութեան ենթարկելու զօշաքաղութեան և զրպարտութեան համար: